



Դրամաշնորհի գումարով ձեռք բերած կոմբայնը ժամանակակից է, բարձրորակ գյուղատնտեսական տեխնիկա է, որը բերքահավաքը ապահովում է արագ եւ չնչին կորուստով: Ֆերմերը մի տեղի բնակիչ արդեն ընդունել է աշխատանքի: Նրանք հերթապահությամբ կաշխատեն եւ հույսով են, որ ժամանակակից կոմբայնը կբարելավի նրանց ֆինանսական վիճակը: Իսկ գործ օգուտոս-սեպտեմբեր ամիսներին շատ ունեն: Վրաստանի գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման գործակալության տվյալներով, Ախալքալաքի մունիցիպալիտետում 8000 հա գարի եւ 2000 հա ցորեն է ցանվել:

Նախաձեռնությունը ֆինանսավորվել է Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Զորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ www.enpard.ge.